ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«11» «դեկտեմբեր» 2022 թ. № 287-Ն

2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել.

1) 2022-2023 թվականների որսի կենդանիների ցանկը, դրանց օգտագործման թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները՝ համաձայն հավելվածի,

2) 2022-2023 թվականների որսաշրջանի ընթացքում սույն հրամանի հավելվածով սահմանված կենդանատեսակների համար որսի թույլտվություն ունեցող անձինք կարող են իրականացնել մոխրագույն ագռավի, սովորական կաչաղակի, գայլի և շնագայլի անսահմանափակ որս:

2. Որս իրականացնել միայն հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով հաստատված տոների և հիշատակի օրերին:

3. Շրջակա միջավայրի նախարարության կենսառեսուրսների կառավարման վարչության պետին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003

թվականի հուլիսի 10-ի N884-Ն որոշման, կազմակերպել կենդանական աշխարհի օբյեկտների՝ սոցիալական նպատակներով օգտագործման մասին պայմանագրերի կնքումը:

4. Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-նախարարի մամուլի քարտուղարին՝ ապահովել սույն հրամանի լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

8/11/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«11» դեկտեմբեր 2022թ.

ք. Երևան

Հավելված

Շրջակա միջավայրի նախարարի

2022 թվականի օգոստոսի 11 - ի

N 287 - Ն հրամանի

ՑԱՆԿ

2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

Հ/Հ	ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
1.	Լոր	2022 թվականի օգոստոսի 27-ից մինչև հոկտեմբերի 30-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 113300 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 10 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
2.	Քարակաքավ	2022 թվականի նոյեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 31-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 19900 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 3 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
3.	Թխակապույտ աղավնի	2022 թվականի օգոստոսի 27-ից մինչև նոյեմբերի 13-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 42000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 3 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
4.	Անտառային աղավնի	2022 թվականի օգոստոսի 27-ից մինչև նոյեմբերի 13-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 2000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
5.	Տափաստանային արտույտ	2022 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 9-ը (որսի ենթակա ընդհանուր

		քանակությունը՝ 150000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 4 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
6.	Կոնչան բադ	2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի հունվարի 29-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 28500 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
7.	Մոխրագույն բադ	2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի հունվարի 29-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 17700 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
8.	Ճքճքան մրտիմն	2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 2150 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
9.	Սուլող մրտիմն	2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 5000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
10.	Սև փարփար	2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի փետրվարի 12-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 26450 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
11.	Եղեգնահավ	2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի փետրվարի 12-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 10300 հատ,

		յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
12.	Մորակտցար	2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի փետրվարի 12-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 4500 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 2 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
13.	Եվրոպական նապաստակ	2022 թվականի օգոստոսի 27-ից մինչև 2023 թվականի փետրվարի 12-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 460 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
14.	Փորսուղ	2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 125 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
15.	Քարակզաքիս	2022 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2023 թվականի հունվարի 29-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 450 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
16.	Վայրի խոզ	2022 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2023 թվականի հունվարի 15-ը, (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 20 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
17.	Սովորական աղվես	2022 թվականի օգոստոսի 27-ից մինչև 2023 թվականի փետրվարի 12-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ անսահմանափակ):